

ՀԱՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՆՐԱՆՈՒ

Փլիվենդի համալսարանի հրատարակչությունը (ԱՄՆ) լույս է բնծալել «Հայ լեզվաբանական տարեգիրք»՝ հանդեսի առաջին համարը, որով և հիմք է դրվել լեզվաբանական այս նոր զարբերականի հրատարակությանը:

Նորաստեղծ հանդեսի հրատարակության նախապատրաստական աշխատանքներին ակտիվորեն մասնակցել են ինչպես արտասահմանյան մի շարք երկրների, այնպես էլ Սովետական Հայաստանի մի խումբ հայագետ լեզվաբաններ, նմարգրական հանձնաժողովի կազմում են անվանի գիտնականներ Ջոն Գրեյկեր՝ ԱՄՆ-ից, Ռուդոլֆ Եմիդտը՝ ԳՖՀ-ից, Զիսկարյու Բոլոնգին՝ Իտալիայից, ակադեմիկոս Գևորգ Զահուկյանը՝ Սովետական Միությանից և ուրիշներ:

Հանդեսի հրատարակչության հիմնական կազմակերպչին ու նախաձեռնողը, որի ջանքերով լույս է տեսել առաջին համարը, Փլիվենդի համալսարանի լեզվաբանության ամբիոնի ղեկավար Ջոն Գրեյկերն է: Նա լեզվական է շուրջ 40 գիտական հոդվածների և մի ծավալուն ասումանախոսության, որը վերաբերում է հայկական թղթաբանության (այս աշխատությունից որոշ մասեր լույս են տեսել Սովետական Հայաստանում):

«Հայ լեզվաբանական տարեգիրքը» իր բնույթով միջազգային է: Այնտեղ հոդվածները կարող են տպագրվել եվրոպական երեք լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և հայերեն: «Տարեգիրքը» լույս է տեսնում Ալեք Մանուկյանի մշակութային հիմնադրամի հատկացրած միջոցներով:

Հանդեսի նախաձեռնողների մտահղացմամբ այն պետք է հիմնականում անդրադառնա հայոց լեզվի բազմակողմանի քննությանը՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը: Բարձրագույն լեզվաբաններ թեև կարող են նվիրվել հայագիտության մեջ բազմիցս արժանավոր հարցերի, ինչպես, օրինակ, հայ ժողովրդի ծագման զրբերմբ, հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների շարքում, հայերենի քերականական

և հնչյունական շատ օրինաչափություններ, հայերենի հարաբերությունը մեծած լեզուների հետ և այլն, բայց դրանք կրենվեն նոր տեսանկյունից, նոր մոտեցմամբ:

Համարում զգալի տեղ է հատկացված հայերեն մի շարք բառերի ստուգաբանությանը: Օրինակ՝ կարլ Եմիդտը ստուգաբանել է մեամ, զղենում, առնում, երեւ և այլ բառեր ու բառածներ, Վիլյամ Եմալստիգը՝ տուն և ծյուն բառերը:

Ջոն Գրեյկերի հոդվածը նվիրված է դասական հայերենի է>ա հերթազայությանը: Հնդկական քննում է հնդեվրոպական ծագում ունեցող մի շարք բառեր և իրանական շրջանի հնագույն մի քանի փոխառություններ (ազն, աբուն, առոզանն, աբոստ, աբեւ, աբազ, առասան և այլն) և հանգում այն եզրակացության, որ է>ա հերթազայությունը, որը քննարկ է իրանական փոխառյալ բառերին, վկայում է այդ երևույթի իրանական ծագման մասին: Հայերենում կան սուկ եզակի դեպքեր, որոնցում նկատվում է այդ հերթազայությունը:

Փարիզի պատմական և քանադական գիտությունների բարձրագույն դպրոցի դասախոս Գառլդ դը Լամբերտի հոդվածը նվիրված է հնդեվրոպական կոկորդալիների արտացոլմանը հայերենում:

Հանդեսում զետեղված է նաև Երուսաղեմի համալսարանի դասախոս Մայթ Ստոունի «Երուսաղեմի հայկական արձանագրություններ» խորագրով հետազոտական հոդվածը, որը վերաբերում է Երուսաղեմի հայկական վիմագրություններին ու փայտագրություններին:

Ռուդոլֆ Եմիդտի գրչին է պատկանում «Հայերենի տեղանունները հին պարսկական աղբյուրներում» հոդվածը, որտեղ մանրամասն քննվում է պարսկական մի շարք աղբյուրներում հանդիպող Արմենիա անունը՝ քերականական իր տարբեր ձևերով:

Հանդեսի անդրադարձ համարի էջերում կան նաև համառոտ գրախոսություններ ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրներում լույս տեսած հայագիտական աշխատությունների վերաբերյալ: Գրախոսված են, օրինակ, ՀՍՄՀ ԳԱ լեզվի

* „Annual of Armenian linguistics“, vol. I, 1980. Cleveland (U. A.).

ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից
Հայոց լեզու» (Երևան, 1974, 1976, 1979 թթ.)
համահատոր աշխատությունը, ակադ. Գ. Զա-
հովյանի «Ղեկհանուր և հայ լեզվաբանություն»
(Երևան, 1978 թ.), Էթերի Թումանյանի «Հա-
յերենի հնդեվրոպական անվան կառուցվածքը»
(Մոսկվա, 1978 թ.), Ինչպես նաև Զեյնա Մե-

լարտի «Հին Քուրդիայի հնագիտությունը»
(Էդնդոն, 1978 թ.), Զառլգ Բերեի «Համայնքից
մինչև կայսրություն, Առաջավոր Արևելքի հնա-
գիտության ներածություն» (Օքսֆորդ, 1977 թ.)
հետադոտությունները և այլն:

ԱՄԱՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ,
ՌԻՄԱ ՇԱՌՆՆԵ